Հօր զօրութի՛ւն. Օգնեա՛. Ազատեա՛.
Փրկեա՛ կանգնեա՛. Թողութի՛ւն շնորհեա՛.
Տ̃ր մեզ մոլորեալ ծառայիդ։

Հ.Ի.։

Ով Հոգի ս̃բ. Ա̃ծ ճշմարիտ. լամ և
յերկիր փարիմ. Հզօր. Կարող. Հնա
րաւոր. Բերկրութի՛. Յնծութի՛. Անտր
տում ուրախութի՛. Աննենգ. Անցա
տումն. Անվրէպ. Անարգել. Հրածա
րան. Հրաբորբոք. Սիրոյ Աղբիւր.
Բերկրութեան բաժակ. Հրաշխնող. Այլ
տարազ առնող. Ուսուցիչ. Հաստատու
թի՛. Հխահրաշ. Զարմանահրաշ. Նոր



գօղ.

գօղ. Ճարտարապետ. Յուղղութիւն. Առաջնորդող. Հեղունակ. Թափանձիկ. Սուրբ. Նուրբ. Մաքուր. Կարապետ. Փարթամութիւն. Պարմանիչ. Կեցուցիչ. Առատաբաշխ. Բազմաբաշխ. Բազմարուեստ. Անհատաբար վտակ. Յաղթող. Անձանձիր. Աննուազ. Ամենակալ. Բազմայեղ. Կարողութիւն. Սէր. Լցուցիչ. Օգնեա. Կանգնեա. Հաստատեա. Սերտին զարդարեա: Եւ քեզ ընդ հօր և որդւոյ երկրպագանեմ. և գոհեմ մեղա ողորմեա:

## Ի նշխարսն տաղ. ՀԲ:

Ամենաբարի. ամենահայեաց տէր. Աղբիւր լուսոյ և կենդանութեան ամենեցուն: Ահա երեկոյացաւ օր. Մերժեցաւ տիւ. Մերձեցաւ գիշեր. եհաս աղջամուղջք. Սփռեցաւ մառայլ. կուտեցան սևադէմք. գումարեցան զօրք լեգէոնի. ծխեցին դեղք հիւանդութեան. յորդորեցին ցանկութիւք. տարածեցաւ յիմարութիւն. Արկին թմրութիւնք. Օրոգան կարծիք. քաղցրացան հեղգութիւնք. տիրեցին մոլութիւնք. Թագաւորեաց մարմնապաշտութիւնք. Ամլացեց ումեք ուզեցեց փրկութեան անցանւոց.

Ամենակարող ա̃ծ անկանիմ առաջի քո. միջնորդութե̃ պատուական խաչիդ. և մօրդ կուսի տիրածնի. լոյս համազգիեա. որ լուսաւորես զիմանալիս և զզգալիս. արեգակն և լուսին. գիտութե̃ և խելամտութե̃ ծագեա զլոյս քո. մթան գիշերոյ լուսաւորեա զաչս մտաց մերոց. զօրացոյ զթմրեալս. զգաստացոյ զննջեալս մահուան. առաքեա դասուց ուռնաւորաց. Զօրութի շնորհաց. և առաջացին արիութի̃ք. Ցրուեցին աղջամուղջք. փարատեցին մուայլք. հալածեցին թանձրութի̃ք. փախիցեն զօրք դիւաց. բնակեսցեն զուարթուն երկնից քոյին առաքմամբ. տիրապետեսցեն գթութի̃ք. զօրութի̃ք. և կարողութի̃ք. զգաստուի̃ք. և լուսաւորութի̃ք. Զի կանխիցեմք առաւօտու փառաւորութե̃. հօրդ էի. և որդւոյդ միածնի. և ս̃բ հոգւոյդ ճշմարտի. վայելէ փառք պատիւ յաւիտեանս ամէն. Ով ընթերցօղ յիշեսցես զգալուստ բանասէրն.

## ԱԶ Աղօթքն. ՀԹ.

Գլուխ հարիւրաւորից. կուսանաց պարծանք. մայր էակցին բանի. Աղբիւր ջրհոր ջրոյ կենդանոյ.

լեառն զուարթոյ. ծաղիկ հովտաց. դշխոյ
պանծալի. ոսկեհուռ պսակ. տատարակ.
աղաւնի։ Աղախին Քրի. օրհնորդ փեսայ
ին. տաճար և բնակարան բոլորից փրկու
թե միջնորդ. լանջագեղ զարդ. պարաւո
րաց. եդեմական ծաղիկ. վերինն երկի
ժառանգ. անժառանելին եղականաց ըն
դունող։ Ո՜վ համայնից զինուորեցելոց
խաչապաշտից ախոյեան։ Առ միածինն
բարեխօսեա վ̃ մեր. ծաղիկ անթառամ
միջնորդեա ծնելոյ քում. ծաղիկ համա
փիւռ. թափեա ոռոգէն. ծաղիկ զմռսոյ
Արձակեա զկապեալս. ծաղիկ նռնենոյ.
լուսոյ մայր հայցեա հարազատի քում վ̃
իմ անկելոյս. ծառ կենաց. վ̃ կենարարի
խաչի բարեկամին. թափեա զմեզ իսկու
հի. վ̃ արտասուաց մերոց լուեա զմեզ
'ի հրոյն յաւիտենի սրբուհի։ Որժամ
մէջ և մառախուղ իջանի. զմրրիկ չարին
վերացոյ մաքուր աղաւնի. 'ի յոր կատարա
ծի փողոյ ազդեցութե. լեր մեզ բարե
խօս կոյսդ պանծալի. թևատարած աղա
ղակեմք. անդադար բարեխօս հրաշալի.
Զի աւանդեմք անկեալ և սփռեմք յերկիր
լալով աչօք. հաս մեզ օգնութի հրահրաշ
գետնամածեալ փարիմք խոտոր կաշկանդ
եալ կապելոյս. զարմանահրաշ կոյս։ Ահա
վառի հուր անշէջ վ̃ մեզ. միջնորդեա
մայր

մայր ողորմութեն • Ո՛ հա որթունք սըր
ցեալ տպասեն • Թափեա զմեզ յոյս և ապա
ւեն ։ Ո՛ հա՛ տանջանարանք պատրաստին •
զերծոյ զմեզ Թագ հիւսեալ • Ո՛ հա տըր
հեալ անջատեցին • հաս մեզ պսակ բըա
բխոնեայ ։ Ո՛ հա սառնամանիքն յեռնացեւ,է •
ազատեա զմեզ հնարաւոր • Ո՛ հա տարտա
րոսն և տղջամուղջն հասեալ է • փարատեա
արագահաս մայր • Սակա՛ն վս խաչի դը
բոշմի որդոյ քում • որ 'ի վ՛ր մեր տպաւո
րեալ է • գթա վս սրբալոյս մեռոնի եակ
ցին ողորմեա ։ Ս՛ն մարմնոյ և արեան որ
դոյ քում • որ մինչա ճաշակեմք միջնոր
դեա ։ Տնախմբութե քում շնորհի տիրա
պետեա • զի դու մայր ես ողորմութեն • և
երկրպագանեմք ընդ հօր • և ընդ որդոյ •
և ընդ ս՛բ հոգոյն վայելէ փառք պատիւ
յաւիտեանս ամէն ։

Ձ ։

Բոլորից տ՛ր • արքայ անսկիզբն • տուիչ
բարեաց • և ընձեռօղ ողորմութե • ո՛ղ
շնորհես մի՛շտ երկնաւորաց և երկրաւո
րաց • անբանից և բանականաց • և ծովայ
նոց • կենդանակերպից • և մոլորականաց •
և ա՛մ աստեղաց գիշերոյ և տուընջենի • զե
բազմառատ • և պարարտ • և անկարօտ փառ
Թամութեն մի՛շտ իջանե հեղունակ տու
ջութեն • ո՛ղ և ինձ ընձեռեցաւ բխուր


պարգև

պտըգև միրկութն. և ողորմութն. և փաք
թամութն. և խելամտութն. և վն ապե
րախտութնս. և անառակութես. կորու
սի և վատնեցի։ Յաղագս որոյ նուաղեցան
նուէրք և ձիրք. և աջողութիք. և հասի
՚ի կէտ տնանկութն. եթէ ոչ խնդրեցից
հաց. սովիմ. և կամ ոչ ուղեցից ջուր.
պապակիմ. և թէ ոչ խնդրեմ հանդերձ.
սառնում. եթէ ոչ ժտեմ առողջութն.
տագնապիմ. եթէ ոչ հայցեմ վն կենաց.
մեռաննիմ. եթէ ոչ յենում ՚ի խաչն. այ
սահարիմ. եթէ ոչ ապաւինիմ. ոչ ընչա
նամ. եթէ ոչ դաւանեմ. անտէրանամ.
եթէ ոչ լամ ոչ լսեն. եթէ ոչ պաղատիմ.
ոչ ողորմին. եթէ ոչ յերկիր փորեալ
սփռիմ. ոչ կանգնիմ և արիանամ։ Ո՛չ եմ
իբրև մարգարէ որ ա̄վ ընթանամ։ Ո՛չ եմ
իբրև առաքեալ. որ սքանչելեօք ապրիմ
Ո՛չ եմ իբրև մարտիրոս որ կալ մբր արեամբ
պարծիմ. ոչ եմ իբրև վկայք որ արի կո
չիմ. ոչ եմ իբրև արդար որ հաւատարա
բաշխութբ կշռիմ. ոչ եմ իբրև ճգնաւ
որք. և լռակեացք. որ երկնից դիւրութի
ինջուցանեմ. Ո՛չ եմ ո՛պ ողորմած. որ ողոր
մութի գտանեմ. Ո՛չ եմ ո՛պ համբերող որ
պտուղ քաղցրութն տեսանեմ. Ո՛չ եմ
իբրև խոնարհ. որ բարձրութի գտանեմ.
Ո՛չ եմ իբրև պահեցող. որ զախորժեալն



իմ

իմաց յիս բերեմ։ Ո՛չ եմ փարթամ հոգով
և մարմնով. որ ոչ աղաչեմ յաղագս պակա
սութե. Ո՛չ եմ. առողջ որ ոչ դեգերիմ
'ի դրունս բժշկաց. Ո՛չ եմ իբրև զգեստա
ւորեալ. որ ոչ խնդրեմ հանդերձ. Ո՛չ
ունիմ զգեստ հարսանեաց. որ ոչ պատ
րաստիմ. Ո՛չ ունիմ ձէթ և ճրագ. որ ա
ռագաստ փեսային մուծանեմ. Ոչ ունիմ
պարգև ինչ. որ յերկինս ելանեմ։ Ոչ ու
նիմ տուն վերստին. որ օթևանս հրճւ
իմ։ Ոչ ունիմ գանձ յերկինս. որ սիրտ
իմ անդ հանգուցանեմ։ Կորուսեալ եմ
զշաւիղս արդարութե. զճանապարհնիմ
ուր գտանեմ։ Մեղաւորեմ սակաւորոյ ժը
տեմ իր ինչ։ Նեացեալ եմ. ո՛ սպիտակա
ցուսցէ։ Ընկեալ եմ. ո՛ յարուսցէ. անպի
տանեմ. ո՛ որ ոնեսցէ. մահապարտեմ.
ո՛ ազատեսցէ. վնասակարեմ. ո՛ յառաջ կո
չեսցէ. Ա՛յ դու բարերար և բազում
ողորմ տծ. վն պատկերի քո. ողորմեայ.
վն օրհնեալ շնչոյ քո որ 'ի հողը փչեցեր.
կենդանացոյ. վն խաչի քո դրոշմի. միմե
ռուցաներ. վն մարմնոյ և արեան քո. մի
սատակեցուցաներ. վն սրբեալ յս մեռոնի
քո. մի չքացուցաներ. վն մկրտութե քո.
մի 'ի դժ խս գրաւեր. վն մօր քո կուսի.
մի անտես առներ. վն սրբազան առաքե
լոց. մի պատժեր. վն յարութե և ծնըն


դեան

դեան քո. մի ցասնուր. և վն՟ երկայն մը
տութե՟ քո. մի պատժեր. և վն՟ բարձր
ողորմութե քո. զանկեալս կանգնեա. և
վն՟ մարդասիրութե՟ քո. զգլորեալս յարոյ.
վն՟ տրութե քո տիրապետեա. վն՟ անբաւ
գթութե՟ քում. ներեա՛ և քաւեա՛. և քեզ
ընդ հօր և ընդ որդւոյ. և ընդ սբ՟ հոգւոյդ
վայելէ փառք պատիւ յաւիտեանս ամէն։

## ՁՐ։

Գ.թութե՟ քում տր՟ յս՟. նորոգեցաւ աշ
խարհ ծննդեան քում վերստին վէմ
եղեր և հիմ աշխարհի. բժշկութե՟ քում
ամ՟ ցաւք փարատեցան։ Չարչարանօք
քում հաշտեցաւ հայր ընդ արարածս.
Ո՞վ բան հօր որդի և ճառագայթ և փա
ռակից հոգւոյ։ Ի զննեալ խուզմամբ ո
րոնեցի. ամ՟ գոյացութիւք վերնայնոց և
ներքնայնոց. անմարմնոց և մարմնեղինաց
մտացս թափանցութե՟. զոր ընձեռեցեր
տրամախոհութե՟. և ոչ գտի ուրեք օգնե
ղանի և երագ օգնական. բայց միայն քումդ
դրան. որ ամ՟ դեղք գտանի 'ի հօրէ. 'ի
հոգւոյ զփրկութի և ազատութի։ Ր.ալ որ
վն՟ իմ կապեցար. կնոյն հեզութե՟ քո. ա
զատեա զիս բարերար։ Յաղագս որ վն՟
իմ ձաղեցար. զնոյն ձաղանաց շնորհի. մի
լինիցիմ կատակ թշնամոյն ողորմած։ Սակս
որ վն՟ իմ մերկացար. զնոյն ապ



տակէ

տակի քո միանտես առներ զիս մարդա
սէր․ Յաղագս որ վս իմ թուք լրբենի
կրեցեր և ոչ ցասմնացար․ մի նախատեր
զիս անյիշաչար․ Սակս 'ի կալ[illegible] սեան մի
մի կապեցար վս իմ չարչարեցին լուեցեր․
զկարծրացեալս մեղօք կակղացոյ հնարա
ւոր։ Յաղագս որ վս իմ եղեգն ետուն
աջ ձեռն քո․ վս ջախջախեալ մեղացս․ և
և դատապարտելոյս․ ողորմեա երկայնա
միտ․ Սակս որ վս իմ քղամիդ զգեցուցին․
զներկեալ արեամբ չափ մահու․ թող
զմեղս անոխակալ։ Յոյս և պսակ Յս․ վս
փշոյ պսակի քում զգլխոյ կրեցեր․ որ վս
իմ զփուշ մեղացս այրեսցես կիզուցես․
Յաղագս փայտին որ վս իմ զնա բար
ձեր․ զբեռնինս մեղաց թեթևացոյ զօրա
ւոր։ Սակս որ վս իմ բևեռեցար 'ի փայ
տի․ նոյն շնորհիւ բևեռեա զիս 'ի սէր քո
ամենակալ․ վս իմոյս մեղանաց հարին կը
ռանաւ․ զբևեռացդ համբերութե քում
շնորհիւ․ զհարեալս 'ի յայսոց․ ազատեա
զիս փրկիչ։ Յաղագս հանդերձի․ որ վս
իմ մերկացուցին․ մերկացեալս դժոխոց
թափեա զիս ազատիչ։ Սակս լեղոյն և քա
ցախն․ որ վս իմ արբուցին․ զնոյն շնոր
հիւ զտապ դժոխոցս ցօղեայ բարեգութ։
Յաղագս տիգին որ վս իմ խոցեցին․ ըզ
նոյն գեղարդն զօրութե հատեալ կարեա

 զթշնամի

զթշնամիսիմ տրագահաս։ Որ 'ի կողէն
արիւն և ջուր բղխեաց· զկոյրս լուսաւո
րեայ· զնոյն արեամբ և ջրով բացցի խա
ւարեալ աչսիմ։ Յաղագս չարչարանաց
քոց արեգակն և լուսին խաւարեցաւ·
զխաւար աղջամուղջ մտայս իմ հալածեա
անդորրիչ։ Սակս վիմին պատառման· ըզ
նոյն շնորհի· պատառեա զգիր պարտիս
ամենակարող։ Յաղագս իմ մեղաց· վա
րագոյր տաճարին ծվէնս եղեալ· զնոյն
շնորհիւ առագաստ փեսայէն արժանա
ցոյ ամենամեծար։ Խիացմամբ գերեզմանք
բացան· զնոյն շնորհիւ զմեռեալս յարոյ·
յարուցիչ։ Եւ որպ̃ սուգ զգեցեալ մայր
քո· յարութ̃բդ հրճուեցուցեր· նորին
միջնորդութ̃բ մեռեալս յարոյ· յարուցիչ։
Եւ որպ̃ հաւատացեալք զուարճացան·
քոյին ա̃ծահրաշ զօրութ̃բ· զուարճացոյ
զիս անկեալս ազատրիչ։ Եւ հրեշտակք և
մարդիկք· խայտայէն քումդ սքանչելեաց
ըսքանչացոյ զթմրեալս զօրաւոր։ Եւ որպ̃
բանտարկեալքն 'ի դժոխս խնդացին 'ի
տեսանելն օծելոյդ· և զիս քո շնորհիւ
սփոփեա մեսիայ։ Եւ որպ̃ հաներ 'ի բան
տէն զբնութիս ադամայ· արձակեա զիս
դերբիս մարդասէր։ Եւ որպ̃ զմեզս թողեր
մաքսաւորին և պոռնկին· և զիմս թողցես
ողորմած։ Յաղագս որ վասն իմ թաղեցար

և յարեար․ մինչ մեռանիմ ՚ի մեղաց․ և
դու յարութիւն օգնական․ Յետոյ համ
բարձար առ հայր․ վս համբարձման քո
շնորհիւ բարձրացուսցես զտառապեալս
աղբևաց զարմանահրաշ․ Յետ համբարձ
ման առաքեցեր զհոգին․ և հրս զինեաց
զառաքեալս․ հրով հ․ գովայրեսցէ զմեղս
հիահրաշ․ Աքանչելեօք ջուրն ՚ի գինի փո
խարկեցեր․ փոխ․ ցես ՚ի բնութիւն արա
րիչ․ Եւ որ բորն սրբեցեր․ սրբ ա զբոր
հոգոյ իմոյ բժիշկ․ Եւ որ խլից լսել
տաս և համրց խօսել․ հաստատեա զիս
գերիս ուսուցիչ․ Եւ որ զայսս հաներ
՚ի մարդկանէ․ հալածեա զխռովարարն
որ ՚ի յիս սքանչելագործ․ Տր իմ յս և յոյս․
որ զկաղս գնացուցեր․ լից զպակասութիւն
մտացս խոհեմութեն ամենակարող․ Եւ
որ կոյրս լուսաւորեցեր․ լուսաւորեա ըզ
շաւիղս ճանապարհաց իմոց առ ջնորդ․
Եւ որ զանդամալոյծս գնացուցեր․ նո
րոգեա զփտեալ և զքայքայեալս մեղօք նո
րոգիչ․ Եւ որ մեռեալն միամօրին յարու
ցեր․ յարոյ զմեռեալս յարուցիչ․ Եւ որ
չորեքօրեայն յարուցեր․ յարոյ զհնացեալս
և զապականեալս տղմի մեղաց ըստեղծող․
Եւ որ մեղս թողեր պոռնկին և մաքսա
ւորին․ և ես նովին ձայնիւ գոչեմ․ ած
քաւեա զմեղս իմ․ քեզ ապաւինիմ․ քեզ


փար

փառիմ. քեզ անկանիմ և երկրպագանեմ
ընդ հօր և ընդ որ՟ հոգւոյդ. յայժմ և
յաւիտեանս յաւիտենից ամէն:

## Խսաորոշմանօրէն քարոզնի. ԶԲ:

Ահաւոր և բժշկապետ բոլորից տէր և բանեղծող ահա քոյին շնորհիւ անկանիմ առաջի քո կըշռութի զգոտանացս անհամութե: Ջի քաւեցիմ արտաքոյ. և կատարեալ: Անկատար իսկ կատարեալք. յարակատարք և գերակատարք գոն բնութեա երկքի. զի որ մարմնեղէնք կոխեալ կան այսմ քառեցս. իսկ և անկատարք ջանան կատարելութե. և ոչ կարեն լինել կատարեալ. վա պատճառանայ 'ի միք. յիշեն զչար և չարապաշտ կոչին. և ոչ առնեն. ըստայնմ զի կոչէք զիս տր տր. և զոր ասեմ ոչ առնէք: Կատարեալք բոլորովիմբ լսեն և առնեն. որպ թէ. Է աւորք. այս ինքն անուանացեալք. զաղօթս և զտասանորդս վճարեն. Է. ժամ աղօթից. Է. 'ի քնոյ. և. Է. արուեստից: Յարատակատարք. որպ թէ աղբիւր անսպառ և անհատաբար: վտակ առնեն մշտաբար իննէակաւն. որ են բարեհաճոյք: Իսկ գերակատարք են որպ գետ յորդեալ. և վէտա



վէտա

վէտս գան․ ուր առաքեալք․ և մարտիրոսք․ և խոստովանողք․ և ճգնաւորք․ Թէպէտ յեր կրի շրջին․ և ոչ են յերկիր․ այլ են յեր կինս ըստ առաքելոյ․ միշտ զվերինն խոր հին․ և ըստ այնմ մեր քաղաքականութի յեր կինս է․ բայց զինչ առնիցեմ որեմ ան կեալ․ և յիմարեալ Թափառական․ և գե րի․ որ ոչ նմանիմ մարմնեղինաց բնաւ․ և զքառից որ յիշեցաք․ չեմ խառնեալ․ որ եմ անջատեալ․ բաժանեալ․ որոշեալ և կաշկանդեալ։ Ո՜վ քան զկռապաշտս վատթար եղէ․ զի նոքա ոչ գիտելով ե ղեն կռապաշտ․ քանզի ոչ ծանեան․ բայց ես ծանեայ․ գիտեմ․ և գործեմ․ և զհակակայն բարութե․ չար առնեմ։

Այլ արդ ահա բժշկապետ ցաւոց․ ահա՛ սպեղանի վիրաց․ ահա՛ թողութի մեղաց գրգանաց․ ահա դեղք անբուժելի ցա ւոց․ ահա՛ սպեղանի վիրաց։ Ահա՛ հնա րաւորք անհնարից․ ահա կեանք մեռելոց․ ահա՛ կենդանութի մահացելոց։ Ահա լոյս խաւարելոց․ ահա՛ առողջութի հի ւանդաց ահա՛ արձակումն բանտից․ ահա՛ խզումն շղթայից․ ահա՛ ազատութի գե րելոց։ Ահա՛ ուրախութի տրտմեցելոց․ ահա՛ հաց քաղցելոց․ ահա ջուր պասքե լոց․ ահա՛ հանդերձ օրհորդաց․ ահա՛ լանջագեղ հարսանեաց։ Ահա՛ զարդ պա



բաւորաց․

րաւորաց. ահա պսակ. Զ. աւորաց. ահա
զրահ արդարութեն. ահա ասպար փրկու
թեն. Ահա սուսեր խոստովանութեն. ա-
հա մատանի հաղորդութեն. ահա կօշիկ
ս դարութեն: Ահա վահան հաւատոց
հաստատութեն. Այս զինչ առնիցեմ. որ
անողջանալիքեն ցաւք իմ. և խռովեալ
զմերս գռեհիկք. և 'ի քառուղս արտաքոյ
եմ. զոր 'ի վերոյ յիշեցաք. եթէ պատ
ճառ եղից մեղաց. գուցէ բարկացի ա-
րարիչն իմ. զի զըզուեալ և բարձի թողի
արարեալ է. թէ պէտ երկնչիմ կրկին բար
կացուցանել. ով նախահայրն զկինն պատ
ճառեաց. և կինն զօձն. վն որոյ արտաք
սեցան կամ արուսեկին: Յաղագս մար
մնեղինաց. և էջ բանն և կրեաց նոյն մար
մնոյն. և էջ 'ի դժոխս ասելով. ուր է
մահ յաղթութիւնքո. ուր են դժոխք խայ
թոց քո. և յետոյս ք̃ի. ռ. ք. ա. աց.
բիւրք բիւրոց լսճան գիրք. և խայտա
ռակեցաւ սատանայ: Այլ արդ ոչ լինի
պատճառ: Այլ ճար և դեղ որոնեցից.
վն զի ունիմ. Ժ. նիզ զգայարանացս բո
ղոք. և ամբաստան. 'ի ներքոյ. և արտաքոյ:
Նախ. ցանկութե աչաց ա̃ծ մանեղեաց.
և ոչ առ ա̃ծ-այինսն. զի ինն աշխարհին են
յարբեցեալ. և մինն հազիւ առ վերնայ
նոցն. վն որոյ գոչեմ տ̃ր մեղայ: Երկրորդ.

ունկ

ունկնդրութն լսելեաց․ ինն ստորիս լսէ․
և միւնն զվերինն․ վս որոյ աղաղակեմ տր
մեղայ։ Երրորդ․ հոտոտելեացս գարշելի․
ինն տղմի մեղաց․ և միւնն խնկի և ծրկնային
պտղոյն․ և քարոզի ըստ պօղոսի․ ոմանց
հոտեմք 'ի մահուանէ 'ի մահ․ և կենաց 'ի
կեանս․ վս որոյ գոչեմ տր մեղայ։ Չորս․
ճաշակելեաց բարբառ․ ինն սուտ և հայ
հոյութեց․ և միւնն հացիւ և փառաբա
նութն․ վս որոյ պաղատիմ տր մեղայ․
Հինգ․ շօշափելեացս․ միշտ լինիմ գերի
և շուայտ․ ինն ստորայնոցս մարմնեղինաց․
և միւնն մեռոնի․ խաչի․ և աւետարանի․
վս որոյ ժտելով աղերսեմ տր մեղայ․
Վեց․ ներքինս մասանց զգայութն․ ինն
'ի ստոր յարի․ և միւնն առ յերկինս․ վս որոյ
վայ վայ կարդալով ասեմ տր մեղայ։
Եւթ․ տրամախոհութբ միշտ կշռիմ․ և
է իմաստուն դատաւոր յիմարի 'ի կշռելն
ինն աշխարհի․ և միւնն առ ածայինսն․ վս
որոյ բողոք բարձեալ ասեմ տր մեղայ։
Ութ․ յիշողութբ զանցեալն յիշէ․ ինն
մոռանամ․ և միւնն միտ բերէ․ վս որոյ հա
ռաչանօք ասեմ տր մեղայ։ Ինն․ կարծիքն
զգայութն ներքինն համանայ զանաչառ
դատաստանն․ և հատուցումն չարեաց և
բարեաց․ կրկին մոլի և աղալի․ իննիւ ըն
կղմի․ և մի մասն թողու․ վս որոյ ողբ մանա



սէ

ւէ ասեմ մեղայ տր չեմ արժանի հայել ըզ
բարձրութիւս երկնից. ՚ի բազմութէ անօ
րէնութե իմոյ. Տէր. երեւակայութեն
ներքի զգայարանացս. միշտ երեւի զչարն
և զբարին. ոչ հայելի. զդառն՝ և զքաղցրն
զանդրանկութին և զգերութին. զորդիու
թին՝ և զարոհութին. այլ զհակառակն
չարի. վա որոյ ոչ մաքրաւորին ասեմ.
մեղայ տր քաւեա զմեղս իմ: Որով հեռա
ւորեալ և ոչ առնեմ զինչ լիցի ինձ հնար
և ոչ պիտոյանան վկայք զազրութեանս. թէ
ռամիկէի լեալ. ոչ այնքան. կամ ոչ ունե
ցեալ էր պատիւ թագաւորի. և կամ ոչ
իմանայի. և տգիտութեբ առնէի. ոչ այն
քան վնասս դնիւր. զի տգիտութեն հա
մարէի:

Այլ տր իմ և ած իմ. Թագաւորիմ և
դատաւորիմ. Ընկանիմ առաջի քո.
ոչ է. մահուչափ մեղօք. և. ժ. նապատ
կեալ առաւել. և հայցեմ հնար ազատու
թե և փրկութե անձին իմոյ. որ զօրն
ողջոյն. և զգիշերն ՚ի քուն. ոչ ազատիմ
՚ի պղծութէս: Մեղայ տր երախայութեա
մեղայ: Մեղա տր վա մկրտութե և որդե
գրութե շնորհի քո մեղայ: Մեղայ տր վա
մանկութե մեղայ: Մեղայ տր վա երիտա
սարդութեա մեղայ: Մեղայ տր վա ալե
խառնութեա զգայարանացս մեղայ: Մեղայ



տր

տ̄ր վ̄ն ծուլութեանս ցանկութեան գործոյս
մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն դռնաբացութեան բա
նալեացս մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն երդմնեց
ուեն աստիճանի մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն կղերի
կոսութեան պարգևի մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն
ջահընկալութեան աշտանակի ճրագին մե
ղայ։ Մեղայ տ̄ր որ սարկաւագութեան
պատուոյ իսկ և իսկ մեղայ։ Մեղայ տ̄ր
քահանայութեանս ձեռնադրութեան հայրա
պետին մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն եպիսկոպո
սութեան շնորհի և դրոշմի մեղայ։ Մեղայ
տ̄ր վ̄ն վարդապետութեան գաւազանի շնոր
հօղին մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն ատենախօ
սութեանս սրբոյ հոգոյն մեղայ։ Մեղայ տ̄ր
վ̄ն յարատաբերութեանս շնորհաց տուողին մե
ղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն ութ տառից հնոց և նո
րոց կտակարանաց մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն
մ̄ծ աւետարանական արուեստիս բաշխօղին մե
տաց մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն քերթողութեան
տուչութեան ուսուցչին մեղայ։ Մեղայ տ̄ր
վ̄ն ճարտասանութեան հրածոր բաժանի
մեղայ։ Մեղայ տ̄ր վ̄ն տրամաբանութեան
ստանաւոր տուողին մեղայ։ Մեղայ տ̄ր
առ երգարանաց շնորհաց երժշտութեան
շնորհօղին մեղայ։ Մեղայ տ̄ր բժշկութեան
շնորհօղի մեղայ. ըստոյգ և ըստ մարմնոյ
դիւրութի պարգևողին մեղայ։ Մեղայ տ̄ր
վ̄ն բանաստեղծողութեանս ուսուցանօղին


մեղայ

մեղայ։ Մեղայ որ շարաքանութե և շարա
կարգութե շարագրութե և քարտիզագր
ութե մեղայ։ Մեղայ որ զտիւ և զգիշեր
անհատատատ լինելոյս մեղայ։ Մեղայ որ
ամառն և ձմեռն. աշունն և գարունն ապ
րեցուցեր մեղայ։ Մեղայ որ անձրևք և
պտուղք կերեալ յագեցաք. վն անգոհու
թեա խղճմտանացս մեղայ։ Մեղայ որ
ծառք և ծաղիկք. հաւք եղանակողք.
զնոսա տրտրողին մեղայ. Մեղայ որ գինի
իւղ զուարթ արքեալ յագեցաք. կերակրո
ղին տնկզերաց բարերարին մեղայ. Մեղայ
որ ջուրք քաղցրահայեաց. աղբիւրք
պարտիզաց. յաղագս վայելչութե մերում
մեղայ։ Մեղայ որ ամ փորձութեց միշտ
ազատիչ ես. վասն բազմերախտութեան
քում ատեմք մեղայ։ Մ զի ոչ կարեմ փո
փել և կշռել զյանցանս մեղաց. որ այս
քանեացս պարտական և ապերախտ գտայ.
և ոչ եմ ռամիկ որ սակաւ տանջեն. այլ
ըստ մորգարէին. չեն նորա և ըստ մարդ
կան ոչ տանջեսցին։ Այլ դու բարերար
և բազում ողորմ ած։ Հայ անհնարինե
ցաւս. և ոչ գոյ անդորրութի. յանջատ ե
ղէ. զինչ առնիցեմ և ում լայցեմ. որոյ ա
ղաղակեցից. զի դու ես քաւիչ մեղուցե
լոց. և հաստատութիւն յուսահատելոց.
հնարաւոր և կարող ամի. և ոչ զջք ունիմ

բաց ՚ի քէն. և քեւեմ ապաստան վ͞ս բա
զում ողորմութե͞ն քում. փրկեա՛ վ͞ս պատո
ւական խաչի քո. Ներեա՛ վ͞ս մօր քո և
կուսի պաղատելոյս. Թափեա՛. վ͞ս սրբա
զան մարգարէից և առաքելոց. Ջնջեա՛.
զգիր պարտեաց. զԹշնամիս ցրուեա՛. ըզ
բանսարկուն մերժեա՛յ. զմռայլ չարին հա
լածեայ. ուսոյ ինձ զբարիս. և տիրապե
տեայ. զի դու ես մեծ և ահաւոր. ամե͞ն
ողորմ և մարդասէր. և քեզ վայելէ փառք
պատիւ յաւիտեանս ամէն. Ե.յիմ եղ
բարք ա͞ծաբանք. մեղաց քնոյ մ͞իշտ ան
կեալ կամ. զիս յիշելոյ առէք արժան.
որ յոյժ դատարկեմ և յունայն.

Օ ղջո-ն խոստովանողէն ըստ գրոցն. ԶԳ

Հարցումն և մաքառումն ըստ գրոտա.
նաց։ Բանիցս պատկառի և ամա
չի ոք. զի. տասն. կերպիւ ցուցից
այժմ։ ՚Եախ. եթէ հարսից է. Երկու.
եթէ փեսայից է։ Երէք. թէ հարազատ
որդի իցէ։ Չորս. եթէ աշակերտից է.
Հինգ. եթէ պարտականից է։ Վեց. եթէ
գերի իցէ։ Եւթ. եթէ վարձկանից է։
Ութ. եթէ մեղաւորից է։ Ինն. ամենից
մարդոյ ամաչէ. Տասն. հրեշտակաց պատ
կառի և ամաչէ։ Իսկ եթէ հարսնից ես.

պարկեշտաքաղութեն քո գողացուցեալես․
և փեսայն կորուսեալ․ Երկրորդ․ եթե
փեսայեցես․ Հարսն քո փախուցեալես և
յափշտակեալ ելեալեն 'ի քէն․ Երրորդ․
եթե որդիես․ զի առեալեն զժառանգ
ութի՟ն քո յաղագս անառակութե՟ն․ Չորս․
եթե աշակերտես․ վարդապետէ քո ա
նիծեալես վ՟ ծուլութեան քո․ Հինգ․ ե
թե պարտականես․ և ոչ նեղէ տ՟ր պար
տուց քոց․ գուցէ վճարիցէ․ զի գու
բարձրացուցեր և բազմացուցեր․ յաղագս
որոյ անկեալես 'ի բանտ․ Վեց․ գերիես․
և [illegible]սսակարութի քո տեսեալ են․ վ՟ այն
վաճառեն և արկանեն զշղթայս 'ի պա
րանոցի քո․ Եօթ․ եթե վարձկանես և
ոչ աշխատեալ բնաւ․ վարձ խնդրես և
ոչ տան․ զի սովեալ մեռանիս․ Ութ․ մե
ղուցեալես․ և կարծրացեալ սիրով գերա
կատարաւ․ և տարերք նեղեն․ որ ես 'ի
վշտի մեծ․ Ինն․ ամաչէիր ամենից մարդ
կաց․ զի ոչ ամաչես․ վ՟ որոյ վատութի
քո հրատարածի․ Տասն․ չպատկառեցար
պահապան հրեշտակաց․ նոքա բողոք են
և ոչ պահպանեն․ վ՟ որոյ դևք պաշար
եալեն․ Ոհ զայսոսիկ ես եմ․ և ես գոր
ծեալ եմ․ և՛ 'ի վ՟ իմ․ և վ՟ իմ ասացի․
եթե զվերոյ գրեալնէի համեստաքող․
խօսէի զինն պակասութե․ Ր․ԺԼ եղէ են

 Թակայ

թակոյ եւ հաճախակեայ. եւ հասին 'ի կէտ ըն̃ջ
ման եւ մեռանելոյ: Ո՛ր Ո՞հա հուր զի այրիմ
Ո՞հա շղթայ զի կապիմ. Ո՞հա ծով զի
ընկղմիմ. Ո՞հա աւազակ զի հասին. Ո՞հա
խորխորատ զի սուզիմ. Ո՞հա մահ զի մե
ռանիմ. զի թէպէտ չեմ արժանի առ տ̃ն
իմ աղերսել: Ո՞ւ բարձրեալն իմ ձայ
նել. առ ստեղծօղնիմ լալ. եւ հառաչելոյ.
Ո՞ւ մարդասէրն իմ դրունել: Ո՞ւ փրկիչն
իմ թէ ազատել: Ո՞ւ ողորմածն զի ողոր
մել: Ո՞ւ գթածն զի սփոփել: Ո՞ւ ապա
ստարան զի խլել: Ո՞այց դո՛ զվերոյ գը
թեալս վատթարութեանս. եւ ոչ է հնար
անմռունչ մնալ եւ անխօս լինել. զի հա
սեալ է աղջամուղջ եւ մռայլ տարամեր
ժեալ եղէ 'ի գերոյ. Ա՛խ եթէ հար
ստի կոչեալ. որ հայն ծուք եւ իմաս
տուն կուսակրն. փոխանակ երկնաւոր ողոր
մէր. որում օրհնութ եւ հարցուածուք եկե
ղ ցոյ. զի մեր լոք գեօղ պարկեշութեանս
կորուսի. զի ոչ երեւին խնամք փեսային.
ընդ էր ոչ գտանեմ: Ո՛րկու. փոխանակ երա
մոյս գնդի հաւատացելոց. զի ապախտու
թեանս խնցին զհարսանիսն. ընդ էր ոչ ա
ղաղակեմ: Ո՛րեք. որդիէին արքայութեան
սրբազոյս դրօշմիւ. այլ տրոհեալեմ որդէ
դրութէ վ̃ս պաղրութեանս. ընդ էր ոչ
լամ. ոչ անառակն. մեծակական ողբով.


հայր

Հայր մեղայ յերկինս և առաջի քո․ ընդէ՞ր
ոչ գոչիմ։ Ո՛րս․ աշակերտէի քանին․
հնոց և նորոց․ և վարդապետն իմ Յս․ և
ուսուցիչն իմ մր հոգին ած․ կմ կամ
ապաշտութեանս և անհնազանդութեանս
արտաքսեալեմ նոցին շնորհացն․ ընդէ՞ր
հող 'ի գլխոյ ոչ արկանեմ 'ի վր իմ հինկ․
թէպէտ պարտական եղէ բիւր քանքարոյ․
ընդէ՞ր ոչ ջանացի առ 'ի վճարել․ այլ
առաւելապատկեալ յարաբորդեցի․ և եղէ
անհնարին․ ընդէ՞ր ոչ լամ։ Պեց․ վարձ
կանէի քարոզութեան և բարի խրատուց․
զբարոյն չար արարի․ եղէ քո քորաթա
քոյց․ և ոչ առնում վարձ մշակութեան․
և ոչ ըն թանամ մետասան ժամու․ որ մը
թացեալէ և նսեմացեալ․ ընդէ՞ր ոչ կա
ռափեմ և հարկանեմ զգլուխ իմ։ Պութ․
եթէ գերի գրաւեցայ․ և արկին լանջա
շղթայս և վաճառեն զիս․ ումեմն անօրի
նի․ և 'ի դժոխս․ ընդէ՞ր վայ ոչ գոչիմ։
Պութ․ մեղուցեալեմ մասամբ․ է․ մոլու
թեան․ և ոչ գտանի յիս մասն ինչ բարու
թեան բնաւ․ զի տարերք միշտ նեղեն․
և եմ անհանգիստ ըստ եսայեա․ այլ անօ
րէնք իբրև զծով ծփեցին․ և հանգիստ
մի գտյեն․ և եմ տատանեալ երկրի․ ընդ
էր էութեան և գոյութեան էին ոչ գոչ
եմ և մեղայիւ սփռեիմ և փարեիմ յերկիր․

 Ինն․

Յինն. մարդ ոք յերկրէ զրզուեալէ յինէն
եւ նզովեն զկեանս. եւ վայ կարդան ըստ
դատանացս բազմութեան. ընդէ՞ր մոխիր
՚ի գլխոյ իմոյ ոչ արկանեմ։ Ջան. պահա
պանս իմ զրզուեալ է. բազմութեան մե
ղացս վատթարութն. ըստ եսայեայ. եւ
առաքեցեր զհրեշտակս արտաքոյ սահմա
նացքոց նկուն եղեր եւ իջեր ՚ի դժոխս.
ընդէ՞ր կ՚ոչկողագին ձայնիւ ոչ գոչեմ.
վ̃ն որոյ համարձակիմ աղաղակել. եւ գո
ռալ. եւ գոչել. Ո՛վ բարձրեալդ։ Ո՛վ ո
ղորմածդ. Ո՛վ անյիշաչարդ. Ո՛վ երկայ
նամիտդ. Ո՛վ գթածդ։ Ո՛վ մարդասէրդ.
Ո՛վ տուօղդ. Ո՛վ ներօղդ. Ո՛վ հնարա
ւորդ. Ո՛վ կեցուցանօղդ. Ո՛վ փրկիչդ.
Ո՛վ ամենիշխանդ։ Ո՛վ սաբաւօթդ. Ո՛վ
հզօրդ. Ո՛վ կարօղդ։ Ո՛վ առատաբաշխդ։
Ո՛վ եւթանասնեկին. է. ին թողութին
շնորհօղդ։ Ո՛վ մեղաւորաց կոչօղդ. Ո՛վ
վ̃ն ադամայ երանգ ներկեալդ. Ո՛վ վ̃ն
բնութեան թեւատարած խաչեալդ։ Ո՛վ
բոլորից նորոգիչդ։ Ո՛վ սիրոյ բաժակ
արբուցանօղդ։ Ո՛վ հրաբորբոք հրազի
նօղդ։ Ո՛վ այլատարազ լեզուս բարբառե
ցուցանօղդ. առ հրածորան առնօղդ. Ի՛ա
անկանիմ առաջի ք̃յ. եւ հայցեմ ըսպեղա
նի անհնարին ցաւոցս. որ հայրէ բոլորից.
եւ տ̃ր համայնից. Որդի էակից. եւ Հոգի


նորո

նորոգիչ և փառակից։ Ոի ունիմ ինձ
թշնամիք անթիւ քան զաստեղս. և քան
զաւազս բազմութեան. զի ո ըրիցէ բողոքն
իմ. որ մի տ ուզէ պիւրն. և. ՟է. մագձի
անհամութեան. և ան յայտից ընտանութեն
և կապանցիլն. և միանալն. և չ որոշիլն.
և մինչ յաճախութեանն. վ՟ն որոյ մեղա՛
ա՟ծ մեղայ. զի առանց քո ոչ հրեշին առա
քինութիւնք։ Առանց քո ոչ գործին առ
դարութիւնք։ Առանց քո ոչ յառաջ խա
ղան խոնարհութիւնք։ Առանց քո ոչ կա
րեն ուսանիլ հեզութիւնք. Առանց քո ոչ
կարեն լինել բարէ համոյք. Առանց քո
ոչ առատանան առատութիւնք. Առանց քո
ոչ զօրանան արիութիւնք. Առանց քո ոչ
անձին պահեցողութիւնք. Առանց քո ոչ
այնդին ողջախոհութիւնք. Առանց քո ոչ
լինին չորեքտասան գլ. և առաքինութեանց.
Արդատէր հոգի ա՟ծ. զանկեալս կանգ
նեա՛ պգլորեալս յարոյ. զմեռեալս կենդա
նացոյ։ Ո խաւարեալս լուսաւորեայ. վ՟ն
որբոյ լուծի քո պատուականի. և վ՟ն մե՟ծ
տութեն աւազանին շնորհի. և օծմանն դը
րոշմի. և վ՟ն մարմնոյ և արեան կենարարի.
և վ՟ն միջնորդութեան ո՟ր ա՟ծածնին կոյ
սի. և վ՟ն առաքելոց գնդի. և վ՟ն մարտի
րոսաց և վկայից խմբի. զի դու ես ա՟ծ հա
մայնից. և ա՟ր բոլորից. որ մինչ օրհնիս ՚ի

 հրեղինաց

հրեղինաց. և հողեղինաց. և քեզ վայելչ փառք պատիւ յաւիտեանս ամէն.

## Աղերսանք առ տր̃. ՁԴ.

Գթած և ողորմած տր̃. քարացեալ եմ կակղացոյ. Արարչագործ և բարերգութ տր̃. ծուլացեալ եմ արթուցոյ. Լոյս համափիւռ տր̃. ծածկեալ է զմրրիկն վերացոյ. Ողորմած և երկայնամիտ տր̃. խոցոտեալ եմ և բորոտեալ առողջացոյ. Հիւանդաց բժիշկ տր̃. սևացեալ եմ սպիտակացոյ. Ա̃դ որբոց տր̃. մեռեալ եմ հոգով կենդանացոյ. Տր̃ բոլորից տր̃. յիմարեալ եմ իմաստնացոյ. Վեհապետ համայնից տր̃. պասկեալ եմ և ծարաւի զովացոյ. Արդարադատ տր̃. քաղցեալ եմ և սովեալ. Ի քումդ հացէդ լիացոյ. Րաբունապետ Քս տր̃. ծանրացեալ եմ թեթևացոյ. Դու ես լոյս ամենից տր̃. աղքատացեալ եմ փարթամացոյ. Աղբիւր անսպառ հոգի տր̃. խաւարեալ է այս միտս լուսաւորեա. Պարգևիչ բարեաց Քս տր̃. հիւանդացեալ եմ բժշկեա. Երրորդութի̃ և մի ա̃ծութի̃. մոլոցեալ եմ ի հօտէ քումմէ խառնեա. Տր̃ և իշխան տր̃. անտէրացեալ եմ տիրապետեա. Խն̃ երանութի̃ պարգևող տր̃. գե



րե

րի գրաւեալիմ գնեայ։ Արեգակն արդա-
րութեան քրս ած. կապեալեմ տուամբ մե-
ղաց՝ արձակեայ։ Ոսկայր և ահաւոր ած.
վիրաւորեալեմ սպեղանեայ։ Աստանօր
քումդ հանդիսի լայք ած. անկեալեմք
կանգնեա՛յ։ Ջաւոց սպեղանի ած. ընկղ-
մեալեմք՝ հան։ Երևիս միշտ ընտրելոց ած.
այրեցեալեմ ցօղեա՛յ։ Ածբարութեանց բաշ-
խող ած. ունայնացեալեմ լի՛ց։ Լայնատա-
րած տէր բոլորից ած. տրտումեմ և տը-
խուր ուրախացոյ։ Էակից հօր և հոգւոյ
ած. անկեալէ գալստիկն՝ յարոյ։

Գ. աղօթոնք սաղմոսարանին փառաբանոյ. մորգորդէն.

Ձյն.

Գտի ինձ յոյս և ախոյեան զքնարս
դաւթեան սաղմոսարան. յենում
՛ինա ոմ վահան. զայսն հալածէ միշտ
յարաժամ։ Ահա աշտէն սուր և խթան.
որ խոցոտէ զսատանայն. զիւր կամարար
քըն համանգամայն. սրախող տունէ թա-
փառական։ Լամ արտասուեմ և պօրանամ.
ընձեռի երկնից զօրութիւն այն. զի այն է
նիւթ հօր զօրութե. ած ահայր իմաստու-
թեան։ Որ տխրութ կամ իյանկման.
զսա երգեմ և գօրանամ. մխիթարիչէ հո-
գւոյս տան. մատրվակեմ և հաստատամ։
Ի խնանդ հոգւոյս բժշկարան. ոմ թօղ



ցի

ջի դեղ Թմրութեան․ Ճարտարք դեղ
տան հիւանդութեան․ Նմին նման սաղ
մոսարան։ Սովաւ սնոտիք ոչ մերձենան․
կամ 'ի ահէ խաւարութե․ պահն և կուրին
ամենեքեան․ վէրս յուսցէ համանգամ յն։
Տէր պատերազմի յանդիման․ ընդ ամա
ղէկն գեթէոնեան․ միշտ հալածէ ցրուէ
ժամ ժամ․ Թշնամիս ձեր սաղմոսարան։
Սեհից 'ի դրունս Ճարտասան․ զմարդիկ
առնէ հիացական․ չարք ընկալեալ լսեն
զբան․ և լինին ցին մեծ բարեկամ։ Ըղմուկ
կուրն վերանան․ եթէ երգես սաղմոսա
րան․ վերացուսցէ խափանեսցէ․ լինիս
անդորր և անսասան։ Րամից անկեալես
նեղութե․ կամ 'ի ցաւոցդ տառանանման․
բարձցէ զնոյնքն որ 'ի քեզ կան․ տացէ
խնդութիւն արձակման։ Դառն կսկիծ
ալէկոծման․ կամ իծովու խաւարութեան
արագահաս քթթել ական․ եթէ քաղս
զայս երգարան։ Ըմենոյնիէ անման․ հր
ճուեցուսցէ հոգիս ժամ ժամ․ լուսով
լցցէ խնդացուսցէ․ արտոր աչաց բժշկ
ութե․ Պայծառ լուսով է անթառամ․
զգնար դաւթեան սաղմոսարան․ օրհոր
դաց երգ յօրինման․ զգեցցին հարսան
եաց պատմուճան․ Արանելեաց երանու
թեան․ խառնեսցէ դասս աջակողման․
արքայութեն բերկրութեան․ յաւիտենից
անդրան

անդրանկութեան: Տեսանեմ զիս պղերգ-ութե՛. որ մոռանամ վայս երգարան. որ իմ յա՛ էակից բան. յորոյ գալուստ կամ անկման:

## Ա՛ՆԾ խոստովանութեան. ԶՕ.

Աղաղակացող բողոքմամբ աղերսեմ պաղատեմ ապաշաւեմ և ըզ-ղջանամ. մոխիր 'ի գլխոյ ի-մոյ արկանեմ. թաղծեալ սըր-տիւք. արտասուաթոր աչօք անկեալ 'ի գետնի. և զարթեալ 'ի քնոյ մեղաց. ո՞ղ պարգեալ 'ի գինոյ և 'ի ցքոյ: Տեսանեմ զիս մերկացեալ: Տեսանեմ զիս խաւարեալ: Տեսանեմ զիս կուրացեալ: Տեսանեմ զիս մերժեալ և հեռացեալ: Տեսանեմ զիս աղքատացեալ: Տեսանեմ զիս տնանկա-ցեալ: Տեսանեմ զիս ունայնացեալ: Տե-սանեմ զիս տարամերժեալ: Տեսանեմ զիս արտաքսեալ: Տեսանեմ զիս խոցոտ-եալ և բորոտեալ: Տեսանեմ զիս այլակեր-պեալ: Տեսանեմ զիս անհնարին հիւան-դացեալ: Տեսանեմ զիս կապեալ: Տեսա-նեմ զիս մահու գրաւեալ: Տեսանեմ զիս 'ի բաց կացեալ: Տեսանեմ զիս ահա դը-ժոխք բացեալ: Տեսանեմ զիս ահա կա-պար և կուպրեռացեալ: Տեսանեմ զիս



անքուն

անօրուն որդունքն սլացեալ։ Տեսանեմ խաւար թանձրամած պաշարեալ։ Տեսանեմ սառնամանիքն լեռնացեալ։ Տեսանեմ անշէջ հուր վառեալ։ Տեսանեմ զօրք լեգէոնի կուտեալ։ Տեսանեմ տարտարոսն մրմնջեալ։ Տեսանեմ ալէկոծութի հասեալ։ Տեսանեմ զի ամեն կապեցեք զկապ՚ աւլդ մեղօք։ Տեսանեմ զի ամենն արկէք ՚ի կաթսայն։ Լսեմ զի ամեն երթայք յինէն անիծեալք։ Լսեմ զի ամեն արկէք ՚ի խաւարն արտաքին։ Լսեմ զի ամեն յաւիտենից տանջեսցի։ Լսեմ չար մշակդ անիրաւութեն։ Լսեմ զձայնն հրեղէն գաւազանի. և մեկնեալ ոդիցն այծից։ Յափշեցաւ անձն իմ։ Համրացաւ լեզու իմ։ Խաւարեցաւ աչք իմ։ Տկարեցաւ սիրտ իմ։ Սառեցաւ լեարդ իմ։ Թուլացան ոտք իմ։ Դօսացան ձեռք իմ։ Պատեաց ինձ գեհոնք։ և հասի ՚ի կէտ մահուան։ Ո՞ւր երթայց. ո՞ւր գտից միջնորդ և թափօղ. եթէ որոնիցեմ ինձ ճար և դեղ։ Խաւարեալ է աչս իմ ոչ ընթացայց։ Համրացեալ է լեզու իմ որոց բարբառեսցից։ Աղաղակեմ հառաչեմ. ո՞վ լուիցէ. եթէ յերկինս նկատեմ գուցէ հուր իջցէ. և ընկլիցէ պատուհասակոծ։ Եթէ զանունէին յիշեմ աներեւոյթք հարկանեն զիս։ Զի պղծեն շրթունք իմ. եթէ լամ



քարկոծ

քարկոծ առնեն. եթէ պապանձիմ ոչ լսեն. եթէ երկիրպագանիմ տարրք նեղեն զիս. եթէ գերի կոչիմ ոչ ընկալցին զիս. եթէ բախիցեմ ոչ բացցեն ինձ. վն զի մեծ է վնասիմ։ Ո՛ղէ հակառակ պատուիրանաց էին։ Ո՛ղէ չար օրինակ բազմաց։ Ո՛ղէ յորդորիչ չարութե. Ո՛ղէ բարձրամիտ ոմն սադայել։ Նախանձոտ ոմն բելիար և կային։ Ո՛ղէ բարկասիրտ ոմն փարաւոն։ Ո՛ղէ ծոյլ պղծոգ ոմն անձնապաշտ։ Ո՛ղէ ագահ ոմն յուդայ։ Ո՛ղէ որկրամոլ և շուայտ ոմն որովայնապաշտ։ Ո՛ղէ բղջախոհ ոմն սոդոմայ և գոմորայ։ Ո՛ղէ ապստամբ. Ո՛ղէ մատնիչ. Ո՛ղէ ուրացող։ Ո՛ղէ պատրող։ Ո՛ղէ բարեատեաց. Ո՛ղէ զրկող։ Ո՛ղէ գող և աւազակ։ Ո՛ղէ արիւնաջան։ Ո՛ղէ քանքարաթաքոյց։ Ո՛ղէ լի՛ արեամբ անմեղաց։ Ո՛ղէ քրէականն սիրող։ Ո՛ղէ պատճառ աշխարհի ցաւման։ Ո՛ղէ պատճառ մահ տարաժամու։ Ո՛ղէ պատճառ անմեղաց։ Ո՛ղէ պատճառ ամ տեսակ մեղաց։ Եթէ ասիցեմ թէ մարդեմ վն ինձ. զի մարդո պատկերէ էմ. և բանական և ոչ անբան. Անշունք որ ոչ ունին բանականութի. զի շնչաւորեն. մի թէ նց ոչ նայեցայ. մի թէ 'ի նոցունց ոչ ուսայ։ Որ ժրաջանէր մեղուն։ Ու վաստակող մրջիւնն. Խորա



գէտ

գէտ օձն։ Միամիտ աղաւնին։ Ողջա-
խոհ տատրակն. և արդարե արագիլն։
Սրաթռիչք արծիւն. վս̃ զի սորա թռու-
չումն և զեռուն. և սոցունց ոչ ևս համե-
մատիմ։ Վա՛յ ինձ բնութբ̃ ողորմածն
բռնութբ̃ զայրացուցի։ Քաղցրն դառ-
նացուցի։ Գթածն անգութ արարի։
Մխիթարիչն տրտմեցուցի։ Մարդասէ-
րըն զղջուեցուցի. այն քան մինչ զի ստեղ-
ծօղն սարջացուցի։ Վս̃ որոյ վա՛յ աւուրն
որ ծնայ. լաւէր որովայնախեղդէի լեալ.
քանթէ այժմեմ ամօթալից. և թշուա-
ռական. ամ̃ անբանից և բանականաց։
Բայց արդ ո՜ գիտեցից. զի եմ կաշկան-
դեալ. և կապեալ. և տրոհեալ. այլ արդ-
դիմեցից այժմ տկար գոլով մեռեալս հո-
գով. առ նախագոյնն մարգարէից։ Մով-
սէսի տեսանօղին աղաղակեմ. որ փրկիչ
եղև ի լ̃ի. և անցոյց զծովն կարմիր. և ե-
լեալ ՚ի սինեայ լեռնն. և եբեր զ. ժ. բա-
նեան օրինաց. և զպասկեալ ժողովուրդն.
ի̃ի. ամ անապատին կերակրեաց. և ՚ի վէ-
մէ ջուր բղխեցոյց. հացիւ հրեշտակաց
կերակրեաց. նոյն գաւազանի շնորհն ե-
կեսցէ ՚ի վ̃ր իմ։ Եղիայի պաղատեմ որ
կապեաց զերկինս զերիս ամս և զ. զ̃. ամիս
և արձակեաց. և զբազումս սպան և կեն-
դանացոյց. նոյն զօրութն ժամանեսցէ ինձ



դառ

գառնագունիս․ և ո՛վ հրեղէն կառօք
բարձրացեալ յերկինս․ բարձրացուսցէ զա
ղերսն իմ առ բարձրեալն։ Եղիսէոսի ա
ղերսեմ․ որ զմեռեալ դին 'ի գերեզմանն
հասանելով կենդանացաւ․ սա և միջնոր
դեսցէ վն մեռեալ ոգոյ իմոյ։ Դաւթի
մարգարէին լամ որ ածահայր կոչեցաւ։
Երեմիայի տեսանողին ողբամ․ որ ողբա
սէրն լսիցէ զողբս և զաղերս իմ և ող
բասցէ զմեղս մարդկայնոցս։ Եսայեայ
մարգարէին հառաչեմ․ որ բազում մար
գարէութիւնս արար վն բանին․ և վն մե
ղուցելոցն յուսադրութիւն բանի։ Նաթա
նայ և գաթայ լամ․ և կոծամ որ զպատի
ժըն վերացուցանելոյ եղեն պատգամա
բեր։ Դանիէլի տեսանողին առ ոտս փա
րիմ․ որ զշուշան ազատեաց․ և զառիւծոյ
զբերանս եխից․ Ամբակումայ կողկողամ․
որ Դանիէլի ճաշ ընթացոյց 'ի գուբն ա
ռիւծուց առ բաբիլոն․ և ես աստ սովա
մահ մեռանիմ․ Եզեկիէլի ընդ դէմ ան
կանիմ․ որ տեսեւ զտր 'ի վր չորեքկերպեան
աթոռոյ բազմեալ․ 'ի յափն քոբար գե
տոյն․ որ անկեալ իբրև զմեռեալ և յար
ոյց․ ասելով որդի մարդոյ մարգարեաց․
և այլ մարգարէիցն ամենեցուն խանդաղա
տեալ աղերսեմ․ և ձայնեմ ողբալից եր
գով առ երանելի առաքեալսն․ Յակ․ վի



մինս

մին որ բացօղէ և փակօղ արքայութե. և
դժոխք ասէ մի յաղթահարիսցեն. Նմա
լուիցէ զանանկութի՟ն իմ: Նու պօղոս եր
րորդ յերկինս երօղն. զանձառ փառաց
տեսանողն. և ապաշխարութե հրաւիրօղն.
մինչև 'ի լիւրիկէ զաւետարանն լցուցանողն
տեսցէ և գթացեալ միջնորդեսցէ վ͞ն իմ
եղկելոյս: Փիլիպպոս և Թաթէոս Նկա
տեսցեն վատթարութեա. որ ինքն և՛ս ար
տաքոյ դրախտին եկաց. Խ. օր. և Թաթէ
ոս զԹիւ ոսկերաց ելից օգնեսցեն ինձ:
Նայեսցին առ յիս Թովմաս և բարդու
ղիմէոս. զի ահա մեռեալ եմ Թերևս բա
րեխօսութե͞ն կենդանացուսցեն. Ընկալ
ցի զիս տ͞ն եղբայրն. սրբազան առաքեալն
'ի յարկս վ͞ն բազում գթութե͞նց Նուաճես
ցեն կմերս իմ որդիքն զեբեթեայ: Յո
հաննէս. և Յակոբոս. վերնայնոց պատ
մօղն. և յակոբոս առաջին մարտիրոսն:
Կոծեսցեն ինձ. Հ͞Բ. հրամն որ բարբառ
քըն: Այ կարդասցէ 'ի վ͞ր իմ հուէթե
ոս. զանազան չարութե. Ապեղանեսցէ
ինձ երանելին յոբ: Ըհա՛ եղէ ես անհնա
րին վէրօք որդնալից հանդերձ գուեհիւք
լիցի թէ ժամանեսցի միջնորդութե ա
մենի: Ողորմեսցին ինձ ժողովք հայրա
պետաց զի ահա ընկզմիմ 'ի խորս: Այ
կարդասցեն. Յ͞Ժ. ան վարդապետք 'ի



վ͞ր

վ͞ր իմ. որ անհնարին դեղամբ ներկե
ցայ և սնուցուցի զպայծառ ոգիս: Ուսա
ցէն զիս մարտիրոսք. նահատակք. և վը
կայք. արեամբ զոր հեղին. Սպանանեցեն
որդունք իմ լուսակացք. և ճգնաւորք.
զարմանահրաշ աղօթիւք. և զայս զամենե
սեան միաբանմար. կալցեն զվատթար ան
ձնիմ. մեղօք փտեալ կեանք իմ. և ածել
զիս 'ի դրան մեծ բարեխօսին ամենամա
քուր կուսին մօր մարմնացելոյ բանին.
յոյս և պարծանք քրիստոնէից գնտին. և
տեսցէ զիս ոչ մեռեալ. աչօք խաւարեալ.
լեզուաւ համրացեալ. ձեռաւ և ոտս թու
լացեալ. շղթայիւք կապեալ. լանջիւս
ըմբռնեալ. զի մայրէ ողորմութե. թեր
ևս գթասցի և ողորմեսցի. Տեսանիցէ ըզ
նշան որդոյ թագաւորին 'ի վ͞ր իմ զփրկա
կան խաչն: Ով դուք մարգարէք և ա
ռաքեալք. նահապետք և հայրապետք.
վարդապետք և ճգնաւորք խնդրել 'ի տ͞նէ
թախանձիւ. գիտեմ զի անդարձէ բարե
խօսութի ձեր և միջնորդութի լիցի. զի
բացցի աչք իմ. և արձակեսցի համրացեա
լեզու իմ. եկեսցէ զօրութի զի կանգնե
ցայց. և լուծցի շրթունք իմ. և արձակես
ցի լեզու իմ. նոյն ժամայն բարբառ իմ
առ ստեղծօղն իմ. առ բարձրեալն իմ.
մի մի զյանցանս իմ ասացից. զի թէպէտ

ծածկագէտէ. Տէր գաղտնիք յայտնի են ամենահայեաց աչացն քո։ Բայց բիւրաւոր վըրա խոստովանիմ. սրտիւ հառաչեմ. ձեռօքս կարկառեմ. գետնամածեալ պաղատիմ և անկանիմ. լիցի թէ ցաւոցս դեղ գտանիցեմ. Զի ող 'ի դժոխս իցեմ. և միայն գամ լոկ իցէ ինձ բարերարն. քաղցրն. անյիշաչարն. աննենգն. գթածն. ողորմածն. ամենամաքուրն. բոլորից տէրն։ Որ եթէ անտես առնիցէ վատթարութեան. հալիմ որպէս կապար. սուզիմ որպէս ընդ խորս անդնդոց. այր իմ որպէս եղէգն. ոչ ընչանամ որպէս փոշի. մատնիմ 'ի ձեռս դահճի. արգելիմ աներանելի. քոյքայեալ նաւս 'ի խորս ծովու ալէկոծի յարաժամ. և յաւիտեան անձն իմ տանջի. և տէր բանք և խօսք սպառի։ Բայց ոչ եմ անյոյս որպէս սատանայ. բարեխօսութեամբ սոցին յուսամ. խնդամ. ցնծամ. զուարճանամ. պարիմ. հրճուիմ. խայտամ. երկրպագանեմ. ընդ հօր՝ և ընդ որդւոյ՝ և ընդ սբ. հոգւոյն. և զսբ. կոյսն Ածածին դաւանիմ. մարգարէից և առաքելոց միջնորդութեամբն. և զմիւս անգամ գալուստ քո հաւատամ և խոստովանիմ. բացից զբերանիմ շնորհիւ տն. և ասացից զցաւս և զյանցանս առ թագաւորն երկնաւոր. և գտից թողութեան փրկութեան յանցանաց. և ազատութեան

աստանօր բժշկարանէս • լալով և հառա
չելով • գերակատար սրտիւ ։ Ով յարու
ցեալդ 'ի մեռելոց • յարութն և կեանք
քո • այժմ մեռեալեմ • յարոյ զիս որպէս զՂա
զար • և զմիամօր զորդին յարուցեր • վասն
արտասուաց քուերց և մարց ։ Ով հովուապետ
բարի քո • այժմ մոլորեալեմ • խառնեա
զիս 'ի հօտ քո • որպէս անառակ որդին • Ով
Նորոգօղ և Ճարտարապետ • փտեալ եմ հնա
ցեալ մեղօք • Նորոգեա զիս • որպէս զնախա
հայրն իմ նորոգեցեր ։ Ով անկելոց նպաստ
և օգնական • անկեալ գլորեալ և Թաւա
լեալ եմ տղմի մեղօք • լեր ձեռնտու և օգ
նեայ • որպէս զդաւիթ կանգնեցեր • և վերս
տին ընձեռեցեր զմարգարէութին ։ Ով գա
ւազան հաստատութե • և երրորդ օգնական •
ընկղմեալեմ մեղաց ծովու ալէկոծութե •
լեր ինձ ձեռնտու • և սաստեայ խռովու
թե ծովու ալեկոծութե • լեր ինձ ձեռն
տու • և սաստեայ խռովութե ծովու • զի
դադարեսցի և ցուցցէ զանդորրութին •
որպէս ընկղմելոյն պետրոսի եղեր ձեռնտու •
և զմրրիկ ծովուն հանդարտեցուցեր ։ Ով
Ճարտարապետ բժիշկ • զի բժշկութին քո
ոչէ դեղով • այլ բանիւ • բժշկեայ զիս
անբժշկելի ցաւէս • զի որպէս բժշկեցեր ըզ
ցաւս 'ի մարդկանէ • զ • Ճ • ամպետն • զմաք
սաւորն • և զքանանացին ։ Ով խուլք

 լռանն

լուան. և համօրէն խօսեցան. ըստ Եսայ-
եայ. Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց.
և զցաւս մեր եբարձ. զոր մարգարէն վը-
կայէ պատմէ. ողորմեայ ինձ տէր զի հի-
ւանդեալ եմ. բժշկեայ զանձն իմ. և ես
նովին ձայնիւ պաղատիմ. և զիս զհիւան-
դս բժշկեայ. Ով արեգակն արդարու-
թեն քս. և անմատոյց լոյս. սևացեալ և
թխացեալս զանազան մեղաց բազմաց.
ընդդէմ. է. առաքինութ՛ց. է. մոլու-
թե. սպիտակացոյ և վառեցոյ 'ի սէր քո.
ով զբազումս պայծառացուցեր. զոր 'ի
բերանոյ մարգարէ՛ց խօսեցար. եթէ ից
են մեղք ձեր իբրև զձանձախորիթ. ի-
բրև զձիւն սպիտակ արարից. և եթէ ից
են մեղք ձեր իբրև զյորդան կարմիր. ի-
բրև զասր մի արարից. և զիս մաքրեայ 'ի
հնութէ մեղաց. Ով լուծիչ կապանաց.
կապեալս 'ի շղթայս տոռամբ մեղաց ան-
լուծանելի. ոչ միայն ձեռս. այլ ոտս. և
զպարանոցս. սրտիւ և երիկամամբ. լուծ
զիս և արձակեայ քոյին զարմանահրաշ ո-
ղորմութ՟ն. ով իջանելն քո 'ի դժոխս.
լուծեալ հալեցան շղթայք բանտարկե-
լոցն. հայցեմ զնոյն զգթութի քո արկ 'ի
վ՟ր կապեալս. Ով տուօղդ փառաց լու-
սեղինաց պատմուճանից պսակ փառաց
քումդ գնդի մերկեմ և ամօթալի. վերս

տին

տեին նորոգեալ զպատմուճանն զառաջին. զոր զգեցուցեր ադամայ. և անառակին. զգեցոյ ինձ զնոյն զգեստն անկողոպտելի. Ով կերեալ ազատիչ. և նեղելոց անդոր րութե̃ն թափեալ զիս անմարմին փարա ւոնէ. ո՟ ազատեցեր զԷլ 'ի ձեռաց ան մարմին փարաւոնէ. և զիս ազատեա. և գրեա լինել քում ծառայ: Ով փրկիչդ հաւայնից. սուզեալ եմ 'ի դժոխս վերա ծեալ. եղէ կերակուր որդանց՝ թափեա: Պաշարեալ զիս տարտարոսն՝ խլեա: Ր.ե կասեն զիս 'ի կաթսայն՝ ցողեա: Պաշա րեաց զիս խաւարն՝ լուսաւորեա: կեր եղէ հրոյն շիջոյ. և ո՟ դժոխքն քանդեալ ա ւերեցեր. այժմ նոյն ողորմութե̃ն եկեա ցէ 'ի վե̃ իմ: Ով մարդասէր հոգի ա̃ծ. զոր առաքեալն սէր կոչէ. սառնացեալ եմ անձամբ 'ի սիրոյ քումմէ. 'ի պատուի րանաց քոց կրկին բորբոքեսցի սէր քո. ո՟ պոռնկին և մաքսաւորին եղեր նպաստ. և ո՟ կռապաշտից և 'ի բարբարոսաց որք դարձան առ քեզ զգեցուցեր. զգեցոյ և արկ 'ի վե̃ իմ զնոյն սիրոյ առաքինութե̃ն: Ով աղբիւր ծարաւելոց. տոչորեալ եմ և պապակեալ և ծարաւի. զովացոյ քոյին կեն դանարար աղբերէդ. ո՟ սամարացւոյն խոստացար. կամ առաքեաց զՂազար զի թացցէ զծագ մատին. վ̃ն զի պապակիմ



'ի

'ի տապոյ աստի։ Ով լիացուցիչ համայնի-
յոյժ քաղցեալեմ. ոպ՟. Ե. նկանակաւ.
Ե Ռ. ոն՟ կերակրեցեր. և բան քո կերա
կուրէ ոգւոց մերոց. և զիս սովեալս երկ
նայնին հացիւ լիացո։ Ով սփոփիչ և մխի
թարութ՟ի տառապելոց և սգաւորաց. ըզ
գեցեալիս զսուգ հանդերձ այրութ՟ե. վս՟
բազմութ՟ե և զանազանութ՟ե մեղաց. ած՟
'ի վ՟ր իմ զգութ սիրոյ. և արբոյ ուրախա
րար քո բաժակն։ Ով անկարօտ. կարօտ
եմ քո ին շնորհի. զի փափաքիմ երկնային
խմբիցն պարուց. և զերամս արդարոց. և
զմայլիլ պաշտօնէից. զձայնից նրբագու
նից. լից զփափագ սրտի իմոյ առատաբաշխ
բարերար։ Ով տր՟ բոլորից. անտերացեալ
եմ 'ի բացեայ 'ի սբ՟ պատուիրանաց տիրա
պետեայ. և գրեայ լինել քում ծառայ։
Ով հեռաւորդ մերձաւոր ած՟. աթոռ
քո բարձրէ. ոչ թէ 'ի յերկինս. այլ իննե
կի դասուց բարձրես. տր՟ և ամհաւոր մեր
ձեռս սիրելեաց քոց. բայց մեկուսի հեռա
ցեալեմ չարաչար վշտօք. խոնարհեցո տր՟
զունկն քո. ոպ՟ մարգարէն պաղատէ։
Ով աղքատի ած՟. աղքատացեալեմ և մու
րացիկ. որոց խնդրեցից ողորմութ՟ի. վս՟
զի ոչ ողորմին. ոպ՟ իմաստից կուսանաց որ
յիմարքն խնդրեցին. և ոչ տուան նց՟. և
եմ ոպ՟ յիմար կոյսքն. այլ դու մարդասէ

 րութբդ

րութեքդ զթասցես։ Ով տնանկի ած միշտ
բարձր առնես զտառապեալս աղբեւաց.
յոյժ թափուրեմ եւ տնանկ. եւ չունիմ հան
դերձ հարսանեաց. պաղատիմ վերստին
հաստատեա. եւ զարդարեայ 'ի զարդն ան
կողոպտելի։ Ով քաղցրութն ած յաւիտե
նից. դառնացեալեմ եւ կարծրացեալ ոպ̄
զքար. խնդրեմ քոյին ողորմութբ̄ կակղա
ցոյ զբարս եւ զբնութիս։ Ով գտիչ կորու
սելոց. ոպ̄ առակն քո հրամայես զիննսու
սուն եւ զինն անապատի. կամ. Ժ. դրամն.
եւ ես մոլորեալեմ եւ 'ի բաց ընկեցեալ. առ
զիս 'ի յարկս քո։ Ով արիացելոց զօրութն
տուօղ ած. ծուլացեալեմ եւ հեղգացեալ.
աղաղակեմ. զիս զգաստացուսցես. զի մի
ծուլապաշտ գտանիցիմ հանդիսի քում.
Ով բժշկապետ եւ ցաւոց ապեղանի. ցա
ւալիցեմ պժշկեայ զախտս եւ զհիւանդու
թիս հոգոյ եւ մարմնոյ. զբազումս բժշկե
ցեր. Ով համերց բարբառ ընձեռօղ. համ
րացեալեմ. բաց զբերանիմ եւ օրհնեսցից
զքեզ։ Պ. ալստի ասասցեալ.

[illegible]

ՁԱ։

Արարչագործ հայր բոլորից. ծնող
որդոյ։ Ու որդի ծնեալ 'ի
հօրէ անմայր. լոյս եւ ճառա


գայթ

գայթ իմաստութն․ և հոգի ոք բղխեալ ՚ի հօրէ․ էակից հօր և փառակից միածնի որդւոյ։ Անկանիմ և սփռիմ յերկիր դետ նամածեալ փարմամբ․ հայցեմ և խնդրեմ այսմ ժամու․ միջնորդութբ նախապատ մող մարգարէից․ և սրբազան առաքելոց․ և ոք տիրածին իսկուհոյ․ և սրբոյ պատո ւական խաչին կենարարի․ և ոք կարապե տին մկրտչի․ և սրբոյն ստեփաննոսի նա խավկային․ և սրբոց մարտիրոսաց գնդի․ և ոք վկայից խմբի․ Զի այսօր իջուսցես երկնից ձիր շնորհ և կարողութն զօրութն․ հաւատոյ․ յոյս․ սէր․ խոհեմութն․ արիու թն․ ողջախոհութն․ արդարութն․ վս զի ժամքն․ ի․ և․ դ․ և մասունք ժամուց․ Է Է․ և երբեմն պատահին մասանցս․ հպար տութն․ նախանձ․ բարկութն․ ծուլու թիւն․ ագահութիւն․ ցանկութիւն․ յի շոց․ հայհոյութն․ մարդասպանութիւն․ զրկանք․ և վատթարութն։ Ալէկծութն․ մեղաց մթութիւն․ որոյ սակս կրկնեմ զողբս և զկոծս․ լալոտ աչօք․ բեկեալ սր տիւ․ աղաղակեմ մեծակական ձայնիւ․ զի թէպէտ չեմ արժանի հայել յերկինս․ կամ արձակել զձայնս հառաչանաց։ Այլ ըստ մեծի մարդասիրութն քում․ խոնարհեցո որ զունկն քո․ և լուր հառաչանաց մերոց․ զի իջուսցես վեհահեղ զօրութեդ օգնու թն․

թիւն. և կարողութիւն. յաղագս ժամուց տուընջենոյ։ Առաջին. այգ ժամն բարութիւն արարացեա. Երկրորդ. ծայգ ժամն. լուսաւորութիւն։ Երրորդ. զայրացեալ ժամն շնորհիւ և օրհնութիւն։ Չորրորդ. ճառագայթեալ ժամն. լուսաւորութիւն։ Հինգերորդ. շառաւիղեալ ժամն. աջողութիւն։ Վեց. երկրատեսակ ժամն. առաջնորդութիւն։ Եւթ. շանդակող ժամն. անդորրութիւն։ Ութ. հրակաթ ժամն ազդեցութիւն։ Ինն. հուր փայլեալ ժամն. սիրոյ տենչման։ Տասն. թաղաթեալ ժամն. բարի կրթութիւն։ Մետասան. առաւօտ ժամն. խնդութիւն և ցնծութիւն։ Երկոտասան. արփող ժամն. զուարճութիւն։ Եւ ժամք գիշերոյն այսոքիկ։ Առաջին. զխաւարական ջնջեայ. լուսաւորութիւն։ Երկրորդ. աղջամուղջ ժամն ցրուեայ. լուսազարդութիւն։ Երրորդ. մթացեալ ժամն ծագեայ. պայծառափայլութիւն։ Չորրորդ. շաղաւօտ ժամն ցօղեայ. ողորմութիւն։ Հինգերորդ. ժամն կամաւոր. կարկամեայ սպառազինութիւն։ Վեց. բաւական ժամն. արդարացոյ. հաւասարաբաշխութիւն։ Եւթն. խօթափայլ ժամն փարատեայ բժշկապետութիւն։ Ութ. գիղակ ժամն սաստեայ. բարեբարութիւն։ Ինն. լուսածեմ ժամն մերձեցոյ. զհղման ողորմութիւն։ Տասն. առա

եստ ժամն կարողացոյ զզաստութ՟ն։ Մ՟ե
տասան․ լուսափայլ ժամն վառեալ․ մար
դասիրութ՟ն․ Երկոտասան․ փայլածու
ժամն զօրացոյ քոյի օգնականութ՟ն․ Ա․յս․
ն․ և․ դ․ ժամուս ընձեռեալ․ Ա․ռողջ
ութ՟ի․ խնդութ՟ի․ բերկրութ՟ի․ առաջ
նորդութ՟ի․ լուսաւորութ՟ի․ զի անվրդով
և անկասկած անցուցից զօրս այս․ բարե
խօսութ՟ն վերոյ գրեցելոց սրբազանից․
ըստ մեծի բազմազեղ գթութեդ․ և երկր
պագանեմք ընդ հօր․ և ընդ որդւոյ․ և ընդ
մբ հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն․ Գ՛ալստի պատահմունս․
զայս երգելով բանս բարեբարն ած։

## ՁԱ։

Գոհանամք զքեն Թագաւոր թագաւո
րաց․ բոլորից տր․ սրբոյ յաւիտենի
Արարիչ և մարդասէր տր բարերար․ և
բազում ողորմ ած։ Ի ուր աղաչանաց նո
ւաստից․ և տառապելոց․ և մոլորելոց․ Ար
զպատկեր քո և զօրհնեալ շնչոյ քում զար
մանահրաշ։ Ի խայծումն սքաչ նչ լեաց քոց․
որ զանդրանկին քո առաքեցեր Աէ հոգւոյն
քո․ զկնի բանին միածնի․ որ զաշխարս
նորոգեցաւ Տէրութ՟ն քով կառավարին
խստորայինքնս․ տարրեղինօք ՚ի յերկրի սփ
ռիմք․ զոր ՚ի հողոյ գոյացուցեր․ Լ՛րոտ
աչօք․ աղաղակադոչ ձայնիւ․ ողորմեա

ամ

ամ̅ աշխարհի. մանաւանդ մեղուցելոց.
և մոլորելոց. հնարաւորեայ փրկութե̅ և
ազատութե̅: Տր̅ զանկեալս կանգնեայ որ
յարուցիչես. Տր̅ սահելոյս թիկունք լեր.
որ հաստատութին ես. Տր̅ ընկղմելոյս հաս.
որ փրկիչես: Տր̅ սուղեալս յանդնդոց հան.
որ բազմարուեստես. Տր̅ զորոհեալս 'ի
հօտ քո խառնեայ. որ հովուապետես:
Տր̅ զթափառականս ժողովեայ. որ ամե
նատերես: Տր̅ զկործանեալս կանգնեայ.
որ հզաւրաբարձուես. Տր̅ զպատրեալս ըզ
